ԵՎ ԴԱՐՁՅԱԼ ՄԵՂԱՎՈՐ Է «ՃՆՇՈՂ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ»

Հարցազրույց ՀԿԿ Գորիսի շրջկոմի առաջին քարտուղար Ռ. Ա. ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ հետ

Նոյեմբերի 22-ն էր: Փոթորկված էր Գորիսը: Կոռնիձորի տնտեսության ավտովարորդ Մարտուն Ավագյանն ու անասնապահ Լևոն Ասրյանը, որոնք արածեցնում էին գյուղացիների անհատական անասնահոտը, օրը ցերեկով, 350 գլուխ ոչխարի հետ մեկտեղ... անհետացել էին: Հենց այդպես: Անհետացել էին մեր սահմանում, մեր հողից, մեր տնից: Հագարու գետից (որ Գորիսի և Ադրբեջանական ԽՍՀ Լաչինի շրջանի սահմանն է Կոռնիձորի մոտակայքում) մոտ 3 կիլոմետր այս կողմ, այնտեղ, ուր արածում էր հոտը, մնացել էր... նոր բացված սուփրան՝ մի երկու լավաշ, պանիր, խաշած ձու: Ճիշտ այսպես: Քսաներորդ դարավերջին: Խորհրդայի՞ն երկրում: Վերակառուցվո՞ղ երկրում:

Այս հարցազրույցը պատրաստ էր տպագրության, երբ ընդունվեց «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում իրավիճակի նորմալացման միջոցառումների մասին» ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշումը: Զանգահարեցի Ռ. Ալեքսանյանին և ստիպված եղա մասնակի փոփոխություններ մտցնել:

— Ի՞նչ լուր կա առևանգված մարդկանցից:

— Առայժմ ոչ մի լուր: Անասնահետքերը տանում էին դեպի Հագարու գետի կամուրջը, որը Գորիս-Լաչին սահմանագծի վրա է: Կամրջից ընդամենը 200 մետր հեռավորության վրա գտնվում է Լաչինի շրջանում պարետային ծառայություն իրականացնող զորքերի հսկիչ կետը: Գետի մյուս ափին կամրջից ելնող ճանապարհը հատում է բանուկ ավտոմայրուղին, որով ամեն պահ տասնյակ մեքենաներ են երթևեկում: «Վալլահ, չի կարող այդպիսի բան եղած լինել»— միայն իրենց հատուկ «անկեղծությամբ» երդվում են Լաչինի շրջանի ղեկավարները: Զինվորների պատասխանները կարճ են ու հատու.— «Ոչինչ չենք տեսել և չգիտենք»: Այսպես է «Նախանձելի» միասնական ու միաբան են խորհրդային զինվորները, Լաչինի ավագակախմբերն ու ղեկավարները: Ստացել ենք ԽՍՀՄ ներքին գործերի մինիստր Բակատինին հասցեագրած հեռագրի պատասխանը. «Հանձնված է ըստ պատկանելիության: Եվ ուրիշ ոչինչ: Կոռնիձորում սուգ է: Իրավիճակը՝ լարված»:

— Խորհրդային երկրի ղեկավարը ստորագրել է մի փաստաթղթի տակ, որ ինչպես նաև ԽՍՀՄ արտգործմինիստրության տխրահռչակ հայտարարությունը, հակված եմ կարծելու, կամ թելադրել են ադրբեջանցիները կամ էլ, հրվելուց հետո, խմբագրվել են նրանց ձեռքով: Ինչպե՞ս ընդունեցին գորիսցիները այդ որոշումը:

— Շրջանի մարդիկ վիրավորված են մինչև հոգու խորքը: Ոչ ոք, իշխանության ու կառավարման ոչ մի, թեկուզ ամենաբարձրագույն մարմին, իրավունք չունի տնօրինելու որևէ ժողովրդի ճակատագիր: Ժողովուրդների ճակատագիրը ուրիշ ժողովուրդների, առավել ևս նրանց մի բուռ ներկայացուցիչների, քվեարկությունը չեն դնում: Ամեն ժողովուրդ իր ճակատագրի տերն է: Այս որոշմամբ, արդեն որերորդ անգամ, խեղաթյուրելով իր պատմական հողի վրա վաղընջական ժամանակներից ապրող արցախահայության ազգային-ազատագրական շարժման իմաստը, բացահայտ կոպտությամբ ոտնահարվել են ազգերի ազատ ինքնորոշման լենինյան սկզբունքները: Միխայիլ Գորբաչովը հաճախ էր կրկնում, թե արցախյան հարցում հաղթողներ ու պարտվողներ չկիտի լինեն: Եվ ահա նա վավերացրել է Ադրբեջանի հաղթանակը, և մեր հարևանների 70-ամյա հոխորտալի հաղթարշավը շարունակվում է: Եվ դարձյալ՝ шароко шагает Азербайджан: Եվ սա կատարվում է մի պետության մեջ, որն ուզում է իրավական դառնալ, բայց միայն խոսքով է ընդունում տասնամյակների ազգային քաղաքականության ձևախեղումները, այն դեպքում, երբ անհրաժեշտ էր գործնական քայլերի դիմել 20-ական թվականներին մի բռնապետի քմահաճույքով թույլ տրված խայտառակ անարդարությունը շտկելու համար:

Քմծիծաղ է հարուցում որոշման այն մասը, որտեղ հանձնարարվում է Ադրբեջանի Գերագույն խորհրդին՝ ԼՂՄ-ի իշխանության վերստեղծվելիք մարմինների հետ մշակել և ընդունել նոր օրենք մարզի իրավավիճակի մասին: Ադրբեջանը չունի դրա իրավունքը: Ավելի է և ես էլ կրկնում եմ, այդ իրավունքը նա վերջնականապես կորցրել է Սումգայիթից անմիջապես հետո: Եվ ծիծաղելի է մարզում ժողովրդագրական իրավիճակի փոփոխություններ թույլ չտալու նպատակով միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարություն տալ նաև ժողովրդական դեպուտատների մարզխորհրդի գործկոմին: Այդ ինչպե՞ս պիտի գործկոմը բռնի հանրապետական իշխանությունների ձեռքը, այն ձեռքը, որ այսօր էլ շարունակում է յուղելել կրակին՝ Արցախը բնակեցնելով Հայաստանից հեռացած ադրբեջանցիներով և մեխեթքի թուրքերով: Արցախում ժողովրդագրական իրավիճակի զգալի փոփոխության Ադրբեջանն արդեն հասել է: Ուրեմն ի՞նչ պիտի արվի: Թուրք և ադրբեջանցի նորընակները կրկին պիտի վերաբնակեցվե՞ն: Ոչ իհարկե: Եվ այդ մասին ասված է ամենայն որոշակիությամբ. «Փախստականների պրոբլեմների ամբողջ համալիրի լուծման համար կազմել հատուկ հանձնաժողով»: Հասկանալի չէ՞, որ «փախստականներ» բառի տակ նկատի ունեն ամենից առաջ մարզում բնակություն հաստատած թուրք և ազերի տարրը: Եվ ահա այն միջոցները, որ «հատկացված էին» մարզի սոցիալ-տնտեսական զարգացման համար և մինչև այժմ հիմնականում ծախսվել են ադրբեջանական բնակավայրերում, այսուհետ էլ կծախսվեն մարզի նորընակների հարցերի լուծման վրա: Եվ այս ամենը Մոսկվան «չի տեսնում»:

Զանգեզուրի շրջափակման դասերի մասին հոդվածում դուք սրամտորեն նկատել էիք, որ Ադրբեջանը գործում է «Մոսկվայի ժամանակով»: Այս պարագայում ես կասեի, որ Մոսկվան գործել է «Ադրբեջանի ժամանակով»: Եվ դրանից ոչինչ չի փոխվի: Ոչինչ չի փոխվելու նաև այս որոշումից հետո:

— Չի փոխվելու, ուրվեհետև Արցախը դարձյալ... պատանդ է: Ինքնորոշված պատանդ: Խորհրդային պատանդ:

— Եվ ինչպիսի՞ «հոգատարությամբ» է տոգորված որոշումը այդ պատանդի նկատմամբ: Կարո՞ղ եք պատկերացնել, Ադրբեջանը... Թույլ է տվել, որպեսզի Գերագույն խորհուրդը որոշի խորհրդային մարզում վերականգնել խորհրդային իշխանությունը և խորհուրդ տա, որ նրա կազմում, իրենց քվեքանակին համեմատ, ներկայացված լինեն հայերն ու ադրբեջանցիները: Կարծես թե այդպես չէր եղել, կարծես թե հայերը տասնամյակներ շարունակ հալածել են ադրբեջանցիներին, և դրա հետևանքով վերջիններս... շատացել են, աճելով ավելի արագ, քան հայերը: Ամեն ինչ պարզ է: Ադրբեջանի թելադրանքով կենտրոնը բռնել է արցախյան հարցից ազատվելու միակ ճանապարհը: Ավելի ճիշտ՝ կենտրոնը վաղուց այդ ճանապարհին էր: Եվ ցավալի է, որ «ճնշող մեծամասնությունը» անտեղյակ է, որ այդ ճանապարհը երբեք չի կարող նորալացնել իրավիճակը ոչ Արցախում, ոչ էլ «նրա շուրջը»: Դրա օրինակները տալիս է մեր շրջանը, որը գտնվում է «նրա շուրջը», ամենամոտն է Արցախին և հայտնվել է իրավիճակի խառնարանում:

— Ռոբերտ Արմենակի, բոլորին հայտնի է, որ շրջանը, իհարկ, անցանկալի իրադարձությունների ճառագայթում է հայտնվել: Հանրապետությունում այսօր «ուրիշ Գորիս» չկա: Օրինակները բազում են: Մեկը մյուսից սանձազերծիչ ու աղաղակող: Ահա, իմ ձեռքի տակ է Գորիսի ներքին գործերի բաժնի հաղորդումն այն մասին, որ 1989 թ. հոկտեմբերի 11-ին շրջանի տարածքում, Խնածախ-Գորիս ճանապարհի վրա, Լաչինի շրջանի Մալիբեկ գյուղի կողմից մի խումբ ադրբեջանցիներ ավտոմատներից ու կարաբիններից կրակ են բացել «Զանգեզուր» արտադրական միավորման բեռնատարի, Խնածախցի Արտուշ Սիմոնյանի անձնական օգտագործման «Ժիգուլիի» և դաշտից ծղոտ տեղափոխող Վաղատուրի կոլտնտեսության տրակտորի վրա: Տրակտորը հրկիզվել է: Ավազակախումբը փորձել է հարձակվել նաև Գորիս-Խնածախ երթուղային ավտոբուսի վրա: Բարեբախտաբար հարձակումը կասեցվել է, ողբերգությունը՝ կանխվել...

— Դա բոլորը չէ: Կրակոցների ժամանակ, ակոսավոր զենքի գնդակներից ծանր մարմնական վնասվածքներ են ստացել և հիվանդանոց տեղափոխվել բեռնատարի ուղևոր Հրանտ Առաքելյանը և տրակտորավար Արայիկ Ստեփանյանը: Եվ հիմա դժվար է ասել, թե ինչ հետևանքների կարող էր հասցնել միջադեպը, եթե ժամանակին դեպքի վայր չհասներ ՆԳ Գորիսի բաժնի օպերատիվ խումբը և եթե օգնության չհասնեին Ղափանի, Ագիդբեկովի, Ջերմուկի և Եղեգնաձորի բաժինների անձնակազմերը: Ապրեն տղաները: Բայց սա նույնպես բոլորը չէ: Այս ամենը կատարվեց այն բանից հետո, երբ ընդամենը մեկ օր առաջ, հոկտեմբերի 10-ին, Տեղ գյուղի հսկիչ կետում, նախնական պայմանավորվածության համաձայն, մենք հանդիպել էինք Լաչինի կուսշրջկոմի առաջին քարտուղար Խալեար Մամեդովի հետ, քննարկել Գորիս-Լաչին սահմանագծի ամբողջ երկարությամբ ստեղծված պայթյունավտանգ իրավիճակը, մարդկանց անվտանգության ապահովման անհետաձգելի հարցերը, ձեռք բերել համապատասխան պայմանավորվածություն: Եվ ահա, հոկտեմբերի 11-ին, հավաքվել էինք ինֆորմացիա տալու շրջանի ակտիվին: Մարդիկ դեռ չէին հասցրել վերադառնալ աշխատատեղերը, երբ պայթեց ավազակախմբի հարձակման լուրը: Մա է հարևան շրջանների ղեկավարների հետ մեր տասնյակ հանդիպումներից մեկի արդյունքը: Ադրբեջանական կողմը, հանձինս իր կուսակցական ու իրավապահ մարմինների ղեկավարների, չի կարողանում հրաժարվել ցինիզմի, խաբեության, դավադրության ստոր ու նենգ դավանանքից:

— Իսկ Գորիսում և նրան սահմանակից Լաչինի և Ղարաբաղի շրջաններում պարետային ծառայություն իրականացնող զորքերը: Այդ ինչպե՞ս է, որ նրանք «չեն կարողանում» բացել Գորիս-Լաչին-Ստեփանակերտ, Գորիս-Ղուբաթլու հանապարհները, պաշտպանել մարդկանց անվտանգությունը, բռնել «սև բլուզվոր» զինված հրոսակախմբերի ձեռքը, «չեն կարողանում» կասեցնել ջարդերը, հրկիզումները, պայթեցումները, անասնազողությունները, առևանգումները ու սպանությունները: Իսկ ի՞նչ են կարողանում: Ինչի՞ համար են կոչված նրանք: Ի դեպ, երեխա մի անցել, բայց այդպես էլ մարդկանց իրարամերժ խոսակցությունների և մեկեկաքանությունների առարկան են մնում շրջանում կատարված ապօրինի խուզարկությունները: Ի՞նչ կասեիք այս հարցերի մասին:

— Անկեղծորեն ասած, երբեմն այն տպավորությունն է ստեղծվում, թե մեզ մոտ և հարևան ադրբեջանական շրջաններում պարետային ծառայություն են իրականացնում երկու բոլորովին տարբեր բանակների զինվորներ և սպաներ, որոնք ղեկավարվում են տարբեր կանոնադրություններով, որոնց գործողությունները չեն համաձայնեցվում: Եվ սա զգացվում է հատկապես վերջին-ամիսներին: Օրինակ, կարո՞ղ եք պատկերացնել, որ Գորիսի շրջանի զինվորական պարետ՝ փոխգնդապետ Ե. Զիմբալևսկին անգամ, իրավունք չունի ոտք դնելու ադրբեջանական հողի վրա: Իսկ ահա «հանկարա» կողմի զինվորականները կարող են օրը ցերեկով մտնել Գորիս, ճաշել Հյուրանոցի բուֆետում, կապիտանի աստիճան ունեցող հրամանատարի գլխավորությամբ 6 հոգով խմել դրրսից բերված մի քանի շիշ օղին, վերադառնալ Գորիսի «քթի տակ» գտնվող ադրբեջանական էյվազլար գյուղ, ուր նրանք անց են կացնում «ծառայությունը» և սկսել ինքնիրավ ինքնագործունեությունը: Սեպտեմբերի 30-ին էր: Իրիկնամուտին Մարդիկ ուուն էին դառնում Որոտանի կիրճի իրենց այգիներից, ոմանք՝ Ղափանից, ոմանք էլ Ղափան էին մեկնում: Եվ բոլորին այդ օրը վիճակված էր հարկադրաբար անցնելու հարթած զինվորների «Քրտուկով»: Սանձարձակ լկտիությամբ ոտնահարելով քաղաքացիների սահմանադրական իրավունքները, ավտոմատները դեմ տված մարդկանց կրծքին, նրանք խուզարկեցին մոտ երկու տասնյակ մեքենա՝ դրա իրավունքը չունենալով: Խուզարկեցին ավելի քան 40 հոգու: Քրտինքով աճեցրած բերքն ու բարիքը քափեցին ասֆալտին: Ոմանց փորձեցին պատանդ տանել Ղուբաթլու, այն պատճառով, որ տեղից այգի գնալու համար անձը հաստատող փաստաթուղթ չէին վերցրել: Եվ այս ամենը՝ մեքենաներում կուլ եկած ու սարսափահար երեխաների և կանանց աչքի առաջ: Եվ այս ամենը՝ պարետային ժամի սահմաններից դուրս: Ինքներդ ասացեք, ինչո՞վ են տարբերվում մարդկանց «պաշտպանելու» դիմաց ժողովրդի հաշվին ձրի կերակրվող, զինվորական համազգեստ կրող այս «մեր երեխաները» ադրբեջանական «սև բլուզվորների» բանդաներից: Գուցե նրանո՞վ, որ մարդ լսպանեցին: Բայց չէ՞ որ կյանքից ավելի թանկ է հայ մարդու համար արժանապատվությունը: Ասում են զենք էին որոնում և չգտնելով, ավելի էին գաղազում: Այդ ո՞ր բարոյական իրավունքով է խորհրդային զինվորը զենք որոնում մի շրջանում, որի բնակավայրերը այս վերջին երեք ամիսներին 80 անգամ գնդակոծվել են այն տարածքից, որտեղ կարգ ու կանոն ստեղծելու է կոչված ինքը: Մի շրջանում, որտեղից մի քանի ամսվա ընթացքում 2000 գլուխ մատ և 650 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ են գողացել պորտը գոգալության մեջ կորած այն ստահակները, որոնց ձեռքը բռնելու, որոնց ձեռքից զենքը ետ վերցնելու համար է կոչված ինքը: Մի շրջանում, որտեղից խաղաղ աշխատանքով զբաղված մարդիկ են առևանգվում, մի շրջանում, որտեղ 25 հոգի վիրավորվել և երկու տան՝ սյուներ զոհ են գնացել ադրբեջանական խուժանի կուլը գնդակներին:

— Լուրեր են պտտվում, թե, իբր, Տեղ գյուղում, այս տարվա օգոստոսի 27-ին խուզարկություն են կատարել զինվորական արտաճագուստով ադրբեջանցիներ:

— Երանի թե այդպես լիներ: Թշնամուց չեն նեղանում, բարեկամի հասցրած վիրավորանքն է, որ չի անցնում: Օգոստոսի 27-ի վաղ առավոտյան կատարվածը նույնպես ապօրինի խուզարկություն էր, որի հեղինակներն էին ԽՍՀՄ ներքին գործերի մինիստրության Ադրբեջանում գտնվող օպերատիվ խումբը և զինվորականները: Այս խուզարկության «ձեռագիրն» էր, որ մեկ ամիս հետո ընդօրինակել էին էյվազլարի հարթած խուզարկուները: Գյուղը դեռ չէր արթնացել, երբ ավելի քան 100 զինվորականներով լցված 6 ռադմամեքենաներ և մի զրահաթաց մոտեցան ու գյուղից քիչ հեռու անջատեցին շարժիչները: Արթնացած հատուկենտ գյուղացիները վկայում են, որ մի ակնթարթում թափթփերից թռած զինվորները առաջ էին շարժվում անաղմուկ, կուզեկուզ, տեղ-տեղ սողսող ու գաղտագողի, այնպես, ասես թե թշնամական դիրքերի վրա էին պատրաստվում հարձակվել: Գյուղի հսկիչ կետով անցնելիս նրանք չէին մոռացել կտրել միակ հեռախոսագիծը: Իսկ հեռանալիս պարզապես ճողոպրում էին առանց հետևելու և փախուստի ճանապարհին խորտակեցին հսկիչ կետի ուղեփակոցը: Հետագայում պարզվեց, որ Լաչինի շրջանում կատարված սպանության մեջ կասկածվող ինչոր անձնավորության էին որոնում... Տեղ գյուղում: Կասկածելու իրավունքն, իհարկե, իրենցն է, բայց այդ ինչպե՞ս կարող էր Տեղ գյուղացի «մարդասպանը» հայտնվել Լաչինում, ուր, ինչպես ասացինք, ոտք դնելու իրավունք չունի նույնիսկ Գորիսի զինվորական պարետը: Եվ հետո, մի՞թե մարդասպանին որոնում էին... Հղի կնոջ անկողնում, որի վրայից կոպտորեն թոցրին ու դեն նետեցին վերմակը, թե՞ որոնում էին լորս տարեկան Դավթի օրորոցում, որ նույնպես տակնուվրա արին: Թե՞ մարդասպանին գտնելու համար սենյակի կենտրոնում ներքնաշորերով կանգնած պիտի մնար 65-ամյա կինը՝ ավտոմատի փողը ճակատին ուղղված: Ի՞նչ է սա: Վանդալի՞զմ: Բարբարոսությո՞ւն: Չէ՞ որ այսպես թուրքն էր անում 1915-ին: Եվ այս ամենը՝ ԽՍՀՄ ներքին գործերի մինիստրության ոմն աշխատակից, փոխգնդապետ Իսաևի ներկայությամբ, որը ղեկավարում էր «գաղտնի օպերացիան»: Մեզ, իհարկե, քիչ է հետաքրքրում, թե ի՞նչ «մարտական ծառայություններ» համար է նա հասել փոխգնդապետի աստիճանին, բայց մի՞թե իսաևները պետք է շարունակեն մնալ «մեր երեխաների» բանակային դաստիարակներն ու հրամանատարները: Եվ փառք աստծո, որ խուզարկությունը կատարվել է, երբ քնած էր Տեղը: Հապարտ մարդիկ են տեղացիները...

— Խոսեցիք աղմուկ ճանած ևս մի միջադեպի մասին: Հոկտեմբերի 8-ին «Ժամանակ» լրատվական ծառայով եթեր հեռարձակված ՏԱՍՍ-ի հաղորդագրության մեջ տեղեկություններ կային նաև այն մասին, թե, իբր, նախորդ օրերին Հայաստանից մի մեծ խումբ զոհաճիներ փորձել են զինված հարձակումներ գործել Լաչին ավանի վրա, սակայն դրանք կանխվել են ճերմին զորքերի կայազորի միջամտության շնորհիվ: Որքանո՞վ է դա համապատասխանում իրականությանը: Եվ այդ ինչպե՞ս է, որ Հայաստանից «հարձակումները» կարողանում է կանխել զորքը, իսկ Հայաստանի վրա հարձակումները՝ ոչ:

— Ինչպես վերջին երկու տարիների շատ հաղորդագրություններ, այնպես էլ այդ մեկը, ոտքից գլուխ գրպարտություն է, որը մեր խորին համոզմամբ, հունցվել ու թխվել է Ազերինֆորմի խոհանոցում: Հայաստանից, այդ թվում և մեր շրջանից, անցած 70 տարիների ընթացքում որևէ մեկի վրա որևէ հարձակում չի եղել: Այդ անպատկառ հերյուրանքը ավելի սաստկացրեց սահմանամերձ բնակավայրերի առանց այն էլ լարված իրավիճակը, ավելի խորացրեց երկու կողմերի միջև իրողությունն դարձած թշնամանքը: Եվ դա գայրույթի ու հիասթափության նոր ալիք առաջացրեց շրջանում: Իսկ ի՞նչ էր կատարվել: Լաչինի շրջանի Ջիջիմլու գյուղի կողմից մի ստվար խումբ ադրբեջանցիներ հոկտեմբերի 7-ին կրակ են բացել իրենց անձնական օժանդակ հողակտորներում աշխատող երկու կոռնիձորցիների վրա: Տեսնելով, որ անզեն մարդիկ փախչում են, «քաջամարտիկները» կրակելով հետապնդել են նրանց: Վրա հասած մի քանի գյուղացիներ իրենց որսորդական հրացաններից նախազգուշական կրակոցներով կասեցրել են ելուզակների առաջխաղացումը: Թվում էր, թե ամեն ինչ ավարտվել է բարեհաջող: Սակայն քիչ հետո սահմանի վրա «ծլած» ադրբեջանական խառնամբոխը ավտոմատներից ու կարաբիններից կրակ բացեցին Կոռնիձորի վրա, օգտագործելով նաև լուսարձակող գնդակներ ու հրթիռներ: Արձակված գնդակները դիպչել են տների կտուրներին, շարդել պատուհանները: Մարգուշա Սահակյանի պատուհանից գնդակը ներս անցնելու պահին տանն էին հարսն ու երկու երեխան: Բարեբախտաբար, ոչ մեկը չվնասվեց: Իսկ ահա փոխհրաձգության ժամանակ ծանր վիրավորվել են երկու հայեր և Ղուբաթլուի շրջանում ծառայություն անցկացնող զինվորներից մեկը: Ահա թե ինչպես են Հայաստանից «հարձակումներ» գործել «խեղճ» Լաչին ավանի վրա: Մենք գիտեինք, որ մեր հարևաններին «դուր չի գալիս», երբ մենք երբեմն-երբեմն հասցնում ենք պաշտպանվել ու պաշտպանել մեր երեխայի, մեր հոր ու մոր կյանքը, բայց որ դա դուր չի գալիս նաև կենտրոնական լրատվության միջոցների վայ-աշխատակիցներին, հայտնագործեցինք հոկտեմբերի 8-ին: Մենք թաքցնելու ոչ մի բան չունենք և այդ հաղորդագրության առիթով բաց նամակ հղեցինք Խորհրդային Միության հեռագրական գործակալության գլխավոր դիրեկտոր Լեոնիդ Կրավչենկոյին, նշելով, որ այն ճշմարտությունը նենգափոխելու, ադրբեջանական շովինիզմին ու ծայրահեղականությանը ծառայություն մատուցելու նոր դրսևորում է: Եվ անչափ ցավալի է, որ ստեղծված կացության հաղթահարմանը նպաստելու, իրականում տեղի ունեցածը լուսաբանելու, մեղավորներին ու սադրիչներին դատապարտելու փոխարեն ՏԱՍՍ-ը դիմել է նրանց խրախուսելու և հարևանին կարծիքը ապակողմնորոշելու անբարո քայլին: Մենք պահանջեցինք հերքում տալ ռեգիոնի վերաբերյալ պրովոկացիոն այդ հաղորդագրությանը: Բայց, ավաղ, ինչպես միշտ, մեր ձայնը տեղ չհասավ: Վերջին երկու տարիներին կենտրոնական մարմինների հասցեով ուղարկած մեր հարյուրավոր աղաղակները ոչ մի արդյունք չհնտվել: Բոլոր հեռագրերի պատասխանները միանշանակ են ու շաբլոն այն աստիճանի, ասես գրված լինեն միևնույն չինովնիկի ձեռքով:

— Ձեր նկարագրած և չնկարագրած դեպքերի վերաբերյալ, երևի, բազմաթիվ գործեր են հարուցված:

— Հարուցված են: Բայց... սումգայիթցիների վերաբերյալ նույնպես հարուցված էին: Քանի՞ հոգի պատժվեցին: Մա՞մ է հայտնի: Համենայն դեպս՝ ինձ հայտնի չէ: Ինձ՝ շրջկոմի քարտուղարիս, հայտնի չէ, թե պատժվա՞ծ են, արդյոք, մեր երկու քաղաքացիներին սպանողները, Վերիշենի, Խոզնավարի, Կոռնիձորի, Քարահունջի, Տեղի, Քարաշենի, Շինուհայրի, Խնածախի, Հարժիսի, «Ավանգարդ» տնտեսություններից անասուններ գողացած ավազակախմբերը, հարյուրավոր ավտոմեքենաների ջարդարարները և այս ամենի կազմակերպիչներն ու հովանավորողները: Պատժված որ լինեին՝ կիմանայի: Չեն պատժված: Եվ չեն պատժվելու մեզ, օրինակ, հայտնի է, որ անասնագողերի որոշ լաչինի շրջանի Մինքենդ գյուղն է: Այստեղ են կենտրոնացվում բոլոր գողացված անասունները: Եվ գիտե՞ք ինչու: Խրախուսական մրցանակներ են սահմանված այստեղ: Նա, ով Հայաստանից կգողանա 7 գլուխ խոշոր կամ 20 գլուխ մանր անասուններ, իրավունք է ստանում արտահերթ ձեռք բերելու անձնական օգտագործման ավտոմեքենա:

Եվ Բաքվից գործուղված, մարդ ու խոշոր եղջերավոր հազարավոր «սև բլուզավորներ», ժամանակակից զինամիջոցներով մինչև ատամները սպառազեն շարունակում են վխտալ սահմանամերձ գյուղերում, ձորերում ու անտառներում, պարետային զորքերի աչքի առաջ: Եվ Ադրբեջանի պարետային զորքերը քեֆեր են անում գողացված ոչխարներով ու Հայաստանում անարգել զենք ու «մարդասպան» են որոնում: Եվ բանիմաց-թվերը, նստած տաքուկ առանձնասենյակներում, պատմություն են «շինում» և այդ պատմությամբ թունավորում վրանաբնակների շառավիղներին: Եվ անարները մարտաշուն ու արյունոտ խառնաժողովներ են գումարում Թաքուն ու բացահայտ ու դառնում ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ: Իսկ վեհերովները. «ժողովրդական ճակատայիններ» ձեռքով շրջափակումներ են կազմակերպում՝ խոսելով Մարքսից, Էնգելսից, Լենինից: Իսկ ահա ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշումը «նորմալացնում ու կայունացնում է իրավիճակը»: Բոլորն արժանի են իրար: Եվ բոլորին թնավորում են քաղաքական գեհենական լստացած սումգայիթն ու մեծ շրջափակումը: Մեր քաղաքակիրթ ժամանակների մեծագույն ամոթն ու խայտառակությունը:

Հարցազրույցը վարեց
Գագիկ ԴԱՎԹՅԱՆԸ

Հ. Գ.— Հարցազրույցի այս տարբերակը խմբագրության տանելուց առաջ նորից զանգահարեցի Ռոբերտ Ալեքսանյանին և հարցրի նոյեմբերի 22-ին առևանգված պատանդների մասին: Ձայնը դողում էր.՝ «Գազանաբար խոշտանգված դիակները գտնվել են Ֆիզուլիի շրջանում»: Թվաց, թե խոսափողն ընկավ ձեռքից: Ֆիզուլին Գորիսի շրջանի հետ սահման չունի: Սպանել են այնտեղ, որպեսզի «նորմալանան» հարաբերությունները Լաչինի հետ, որպեսզի ճիշտ դուրս գան Խալար Մամեդովի խոսքերը. «Վալլահ, չի կարող այդպիսի բան եղած լինել»: Մամեդովը այսօր էլ կուսշրջկոմի առաջին քարտուղար է: Նրա ղեկավարը Վեզիրովն է: Իսկ «նախագահության նախագահի» ի գիտություն ընդունված հայտարարության մեջ խոսք չկա այն մասին, թե սպանություններ չեն լինի: Ոչ ոք մեղավոր չէ: Առավել ևս՝ դիակներ հոշոտողները: Մեղավորը «ճնշող մեծամասնությունն» է: